ԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՆՔ ԲՈԼՈՐՈՎ

Դիլիջանի նոր եկեղեցին և հոգևոր վերածնունդը

ddf ԴԻԼԻՋԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ



Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ԴԻԼԻՋԱՆԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԴՐԱՄԱՀԱՎԱՔԻ ԱՌԻԹՈՎ

Աստծո կամոք տարիներ առաջ առիթն ունեցանք կատարելու Դիլիջանի եկեղեցու հողօրհնեքի և հիմնօրհնեքի արարողությունները: Փառք ենք մատուցում Երկնավորին, որ բարերար Մեր զավակների նվիրյալ ջանքերի շնորհիվ գեղեցկատեսիլ Դիլիջան քաղաքը զարդարվելու է հոյակերտ սրբավայրով:

Կարևոր այս նախաձեռնությունը կոչված է վերականգնելու խորհրդային աստվածմերժության տարիներին հինգ աղոթատների ոչնչացմամբ Դիլիջանին պատճառված սոսկալի կորուստը: Դիլիջանում վեր հառնող եկեղեցին վկայությունն է մեր ժողովրդի հոգևոր արթնության և ազգային նվիրական արժեքներին կառչած ապրելու և արարելու հաստատակամության: Նոր տաճարի կառուցումով զորանալու է դիլիջանցիների հոգևոր կյանքը բարեպաշտ ընթացքով անխախտ պահելու սերն ու հավատարմությունը մեր Սուրբ Եկեղեցու, ազգային մեր ավանդների և հայրենիքի հանդեպ:

Այս առիթով հայրապետական Մեր օրհնությունն ու գնահատանքն ենք բերում եկեղեցու հիմնադիր բարերարներին տեր և տիկին Ռուբեն Վարդանյանին և Վերոնիկա Զոնաբեանդին, տեր և տիկին Նուբար և Անա Աֆեյաններին, ինչպես և աստվածօրհնյալ այս սրբազան գործին իրենց ներդրումը բերած բոլոր հավատավոր անձանց:

Այժմ, երբ մեկնարկել է տաճարի կառուցման աշխատանքների հերթական փուլը և անհրաժեշտություն է նկատվում լրացուցիչ միջոցների, վստահ ենք, որ հավատարիմ «Բոլորով» նախագծի տեսլականին մեր ժողովուրդը իր բարեպաշտ զգացումներով կշարունակի զորակցություն բերել աստվածահաճո այս նախաձեռնության իրականացմանը:

Դժվարին այս օրերին, երբ Արցախի ռազմաքաղաքական ղեկավարները ու ռազմագերիները որպես պատանդներ տակավին պահվում են Բաքվում, գերության մեջ գտնվող Ռուբեն Վարդանյանի ձեռնարկած եկեղեցաշինական այս ծրագրի ամբողջացումը կլինի հույսի զորացում, աղոթք և քաջալերություն գերեվարված հայորդիների, հավատավոր Վարդանյան ընտանիքի և մեր ողջ ժողովրդի համար:

հայցում ենք առ Ամենակալն Աստված, որ խաղաղության ու ապահովության մեջ պահի մեր հայրենի երկիրը, շուտափույթ ազատություն և վերադարձ պարգևի գերյալ հայորդիներին վերամիավորվելու իրենց ընտանիքների հետ և նորոգ ձեռքբերումներով շարունակելու իրենց կյանքն ու գործունեությունը ի սեր ազգի և հայրենյաց: Թող Տիրոջ ողորմությամբ Դիլիջանի նորակառույց տաճարը շուտով իր դռները բացի և օրհնություն ու երկնառաք շնորհներ բաշխի մեր հավատացելոց և հանուր հայոց կյանքին:

Օրհնությամբ

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Տեսլական

Դիլիջանում կառուցվող նոր եկեղեցին քաղաքի համար կդառնա ոչ միայն կարևորագույն հոգևոր կենտրոն, այլև մշակութային վերածննդի սրբազան խորհրդանիշ։ Աստծո տունը Դիլիջանի՝ որպես կրթության, մշակույթի և հասարակական կենտրոնի զարգացող կերպարի ներդաշնակ մաս կկազմի։

Նշանակություն

- Վերջին **85 տարում** Դիլիջանում առաջին եկեղեցու կառուցումն է
- Հայաստանում **1 000 և ավել բնակիչ ունեցող միակ քաղաքն է, որտեղ եկեղեցի չկա**
- **19 000 բնակիչ** ունեցող տեղական համայնքի համար կդառնա հոգևոր կենտրոն
- Խորհրդանշում է Դիլիջանի **պատմական, հոգևոր և մշակութային ժառանգության վերածնունդը**

Պատմություն

- Դիլիջանը պատմականորեն ունեցել է հինգ եկեղեցի, որոնք ժամանակի ընթացքում ավերվել են
- Ներկայում եկեղեցական ծեսերը կատարվում են ժամանակավորապես հատկացված տարածքում՝ Թուֆենկյան Հին Դիլիջան հյուրանոցային համալիրում, Ջեյմս Թուֆենկյանի աջակցությամբ և համայնքի հոգևոր հովիվ տեր Ծավարշի կամոք և նվիրվածությամբ

Ճարտարապետական հայեցակարգ

*Եկեղեցին նախագծվել է անվանի ճարտարապետ **Մաքսիմ Աթայանցի** կողմից՝ որպես նվիրաբերություն նախաձեռնությանը*

ԵԿԵՂԵՑԻՆ ՆԵՐԱՌՈՒՄ Է

Բարձրություն | 37 մետր

Տարածք | 375 քառակուսի մետր

Միաժամանակ հյուրընկալում է | 300 հոգու

Եկեղեցաշինության ավանդույթների պահպանում՝ արդիական ճարտարապետության տարրերով

Եզակի առանձնահատկություն | ճակատը զարդարված է հայոց այբուբենի տառերով և աստվածաշնչյան տեքստերով

Քարը | տրավերտին

Տեղակայումը | Դիլիջանի կենտրոնական հատվածում, Աղստև գետի աջ ափին

Ծրագրի պատմություն

- Նախաձեռնության մեկնարկը տրվել է **Ռուբեն Վարդանյանի** կողմից
- Ծրագրին աջակցել են **Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը** և **Դիլիջանի քաղաքապետարանը**
- Եկեղեցին Դիլիջան քաղաքի համապարփակ **զարգացման առավել ընդգրկուն ծրագրի մաս է**
- **Ունի ռազմավարական տեղակայում.** կառուցվում է հուշարձանային գոտու և վերակառուցված քաղաքային զբոսայգու մերձակա հատվածում

Ծրագրի իրականացում

Նվիրատվություններով կառուցված եկեղեցին՝ ներքին հարդարանքով և հարակից տարածքով, կհանձնվի Հայ առաքելական եկեղեցու սեփականությանը:

2010–2014

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- Հայեցակարգի մշակում
- Շահագրգիռ կողմերի հետ փոխգործակցություն

2014–2018

ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՈՒՄ

- Եկեղեցու ճարտարապետական նախագծի մշակում
- Համաձայնությունների և թույլտվությունների ստացում
- Հողօրինեք Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ի կողմից

2019–2028

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

- 16 սյուների օրհնության արարողություն Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ի կողմից, հիմնադիր բարերարների և հովանավորների մասնակցությամբ
- Հիմքի ամրանավորում և բետոնապատում
- Խորանի պատի կառուցում
- Հետլիցք խտացմամբ
- Պատերի կառուցում մինչև 18.75մ
- Սրբատաշ տրավերտին քարով երեսպատում մինչև 17.25մ
- Եկեղեցական կահավորում
- Հարակից տարածքի բարեկարգում և կանաչապատում

ՀԵՏՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՓՈՒԼ

- Անվանակոչություն
- Օծում
- Առաջին պատարագ
- Առաջին պսակադրություն
- Առաջին մկրտություն



ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՆ

Ծրագրի արժեքը	$6 550 000

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԼԱՆ

Արված նվիրատվություններ	$3 045 000
Պակասող գումար	$3 505 000
Ծրագրի ավարտ	2028



ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ

- Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
- Դիլիջանի համայնք
- IDeA հիմնադրամ
- Զբոսաշրջության եվ քաղաքաշինության բարեգործական հիմնադրամ

ՀԻՄՆԱԴԻՐ ԲԱՐԵՐԱՐՆԵՐ

- Ռուբեն Վարդանյան և Վերոնիկա Զոնաբենդ
- Նուբար և Աննա Աֆեյաններ

ԿԱՏԱՐԵՔ ՁԵՐ ՆԵՐԴՐՈՒՄԸ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ԴԻԼԻՋԱՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՎԵՐԱԾՆՆԴԻ ԳՈՐԾՈՒՄ

Մեր առաջարկը ծրագրի գործընկերներին՝

- Ներդրում կատարել Դիլիջանի համայնքի զարգացման մեջ
- Փոխգործակցություն Հայ Եկեղեցու հոգևոր առաջնորդների հետ
- Անվանական ներդրում եկեղեցու որոշակի մասում

Ֆինանսավորման հնարավորություններ

Մեկ քար	$10–$200
Զանգեր	$40 000
Երգչախմբի դաս	$45 000
Կահավորանք	$50 000
Դռներ և պատուհաններ	$60 000
Զանգակատուն (2)	$153 750 յուր.
Տանիք	$200 000
Քիվեր	$242 500
Գլխավոր գմբեթ	$787 500







Կոնտակտային անձ

Արփեն Ղահրիյան

+374 93 206 104

www.ddf.am/hy/project/church/

ddf ԴՐԻՏՅԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ